# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Սեպտեմբերի 28-ին, երեկոյան ժամերգությունից հետո, Ս Աստվածածին եկեղեցում տեղի ունեցավ Հարություն Քեսաբյան, Արսեն Ազարյան, Հայկ Իսայան և Արմեն Խլղաթյան սարկավագների քահանայական կոչման արարողությունը՝ հանդիսապետությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի: Արարողությանը մասնակցում էին նաև բազմաթիվ հոգևորականներ ու հավատացյալներ: Համաձայն Հայ Եկեղեցու կարգի, վկայություն տրվեց ընծայացուների հոգևոր պատրաստության, վարքի վերաբերյալ, և ապա վերջիններս հանձնառու եղան լինելու Տիրոջ դեսպաններն ու հովիվները այս աշխարհի վրա, հրաժարվեցին և նզովեցին բոլոր հերձվածողներին ու նրանց ուսուցումները և խոստացան «աշակերտիլ ու հետևիլ» Առաքելական Եկեղեցու հայրապետների ու վարդապետների ուսուցումներին:*

*Սեպտեմբերի 29-ին, կիրակի օրը, Ս Պատարագի ընթացքում, տեղի ունեցավ ձեռնադրության արարողությունը՝ ձեռամբ պատարագիչ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:*

*Ընծայացուները ծնրադիր բարձրանում են Ս. Խորան և, բազմության կողմը շրջվելով, աշխարհից հրաժարման իրենց ուխտն են կատարում՝ ձեռքերը վեր բարձրացնելով: Երգչախումբը կատարում է «Աստվածային և երկնավոր շնորհ» երգը, որին հավատացյալները պատասխանում են «Արժանի են» վկայությամբ:*

*Սուրբ Պատարագը շարունակվում է մինչև «Ողջույնի» պահը, և կանոնական աղոթքների ընթերցումից հետո ընծայյալներին տրվում են փիլոն և պատարագչի զգեստներ, և վերջիններս զգեստավորված գալիս են Ս. Սեղանի առջև: Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոսը սրբալույս մյուռոնով օծում է ընծայյալների ճակատը և ձեռքերը՝ նրանց վերակոչելով՝ Հարություն սարկավագին՝ Տ. Հարություն քահանա, Հայկ սարկավագին՝ Տ. Մաշտոց քահանա, Արմեն սարկավագին՝ Տ. Սարգիս քահանա, Արսեն սարկավագին՝ Տ. Վահան քահանա: «Ողջույնի» ժամանակ սրբազանը և ներկա հոգևորականները համբուրեցին նորաօծ քահանաների ճակատը և ձեռքերը: Հավուր պատշաճի քարոզ խոսեց պատարագիչ սրբազանը՝ նորապսակ քահանաներին հաջողություններ մաղթելով իրենց ծառայության մեջ:*